ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶՈՐԱԿ ՌԱՖԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԺԹ. 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
**Սամվել Սուրենի ԽՈՒԴՈՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր
**Նաիրա Ռաֆիկի ՀԱԿՈԲՅԱՆ**

Հոգեբանական գիտությունների թեկնածու
**Սյուզի Ֆելիքսի ՍԱՐԳՍՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «ՈՒրարտու» համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. ապրիլի 4-ին ժամը $12^{00}$-ին Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի հոգեբանության և փիլիսոփայության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2016 թ. մարտի 4-ին:

Հոգեբանության և փիլիսոփայության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր՝ **Կ. Ե. Վարդանյան**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը** – Ինքնուրույնությունը համարվում է հասարակության մեջ անձի արդյունավետ գործառումը, նրա բարեկեցությունն ապահովող կարևորագույն գործոններից մեկը (Է. Դեքի, Ռ. Ռայան և ուրիշներ), որը նաև անձի կյանքում կարևոր նշանակություն ունեցող պահանջմունք է, որի ֆրուստրացիան լուրջ հետևանքներ է ունենում անձի հոգեկան առողջության, զարգացման գործընթացի, սոցիալական հարմարման վրա: Ինքնուրույնությունը հատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես պատանեկան տարիքում: Հոգեբուժության մեջ այս տարիքը հայտնի է որպես հոգեկան հիվանդությունների, ինքնասպանությունների կտրուկ աճի շրջան: Նշված հանգամանքները խիստ հրատապ են դարձնում հետազոտությունը ոչ միայն զուտ գիտական, այլև կիրառական տեսանկյուններից՝ հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապիայի և հոգեբուժության ոլորտներում:

Ինքնուրույնության հիմնախնդիրը, ինչպես նաև պատանեկան տարիքը և ճգնաժամը չնայած իրենց կարևորությանը չափազանց աղոտ են հետազոտված թե տեսական և թե էմպիրիկական առումներով: Խիստ աղոտ է հետազոտված ինքնուրույնության օնտոգենետիկ զարգացումը, ինքնուրույնության պահանջմունքի էությունը, դերն անձի կյանքում, ֆրուստրացիան և դրա հետևանքները: Մինչև օրս անհասկանալի է մնում, թե որո՞նք են պատանեկան ճգնաժամի պատճառները, հոգեբանական մեխանիզմները, հանգուցալուծման առանձնահատկությունները, այն հանգամանքները, որոնք մեղմում կամ սրում են ճգնաժամը:

Այսօր դեռևս մշակված չեն զարգացման ճգնաժամերի ընդհանրապես և մասնավորապես պատանեկան ճգնաժամի պարագայում մանկավարժական և հոգեբանական աշխատանքների և հոգեթերապիայի ստրատեգիան և տակտիկան:

**Հետազոտության օբյեկտը** անձի ինքնուրույնությունը և պատանեկան ճգնաժամն է:

**Հետազոտության առարկան** – Պատանեկան տարիքում ակտուալացած ինքնուրույնության պահանջմունքի և դրա բավարարման առանձնահատկությունների դերը պատանեկան ճգնաժամի առաջացման և ընթացքի գործում:

**Հետազոտության նպատակը** – պարզել պատանեկան ճգնաժամը պայմանավորող զարգացման օրինաչափությունները, մասնավորապես այս տարիքում ակտուալացող ինքնուրույնության պահանջմունքի և դրա ֆրուստրացիայի դերը ճգնաժամի առաջացման գործում:

**Հետազոտության խնդիրները** – հետազոտության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

**1.** Վերլուծության ենթարկել պատանեկան տարիքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները, ուրվագծել այս տարիքի առանձնահատկությունները, սահմանները, տարբերությունները դեռահասության տարիքից:

**2.** Վերլուծել պատանեկան ճգնաժամի հետազոտությունները:

**3.** Ճշգրտել ինքնուրույնության որպես հոգեկան իրողության առանձնահատկությունները:

**4.** Հետազոտության ենթարկել պատանեկան տարիքում ինքնուրույնության առանձնահատկությունները:

**5.** Էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության պահանջմունքի բավարարման առանձնահատկությունների դերը պատանեկան ճգնաժամի առաջացման գործում:

**6.** Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել պատանեկան տարիքում հոգեբանամանկավարժական աշխատանքների հանձնարարականներ:

**Հետազոտության վարկածը** - պատանեկան ճգնաժամի առաջացման գործում կարևոր դեր են խաղում ինքնուրույնության հասնելու, անկախանալու օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան: Ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնուրույնության:

**Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը** - Մեր հետազոտության հիմքում ընկած են դետերմինիզմի, զարգացման և համակարգայնության սկզբունքները: Մենք այն կարծիքին ենք, որ հոգեբանական ցանկացած իրողության, այդ թվում նաև ճգնաժամերի հիմքում ընկած է պոլիդետերմինիզմը, այսինքն պայմանավորվածությունը բազմաթիվ հանգամանքներով: Հիմնվելով զարգացման սկզբունքի վրա՝ մենք գտնում ենք, որ օնտոգենեզի կայուն շրջաններն ընդհատվում են անկայուն, անցումային, ճգնաժամային շրջաններով, որոնք տարբեր սրությամբ կարող են ընթանալ:

Համակարգայնության սկզբունքից ելնելով, մենք անցումային շրջանները դիտումն ենք որպես ներքին և արտաքին հանգամանքների, պայմանների, գործոնների ազդեցությամբ տեղի ունեցող համակարգային գործընթաց:

Մեր հետազոտության տեսական հիմքերն են հանդիսանում Հ. Ֆրանկֆուրտի, Հ. Լինչմանի, Ջ. Բորդագեսի, Գ. Պրիգինի և այլոց ինքնուրույնության հիմնախնդրի առընչությամբ առաջ քաշած տեսական դրույթները, ինչպես նաև Լ.Ս. Վիգոտսկու, Է. Էրիքսոնի, Գ. Շիհիի, Դ. Լևինսոնի, Ե.Սոլդատովայի, Ս. Խուդոյանի ճգնաժամերի տեսությունները:

**Հետազոտության մեթոդները.** կիրառվել են զրույցի, հարցման (մշակվել են հարցարաններ պատանիներնի համար) մեթոդները, ինքնուրույնության որոշման, և Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստերը:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն** ապահովվել է մեթոդոլոգիական և տեսական բավարար հիմքերի ստեղծմամբ, հետազոտության առարկային համապատասխան մեթոդական համակարգի ընտրությամբ, կիրառված էմպիրիկական մեթոդների բազմազանությամբ, մեծ քանակությամբ հետազոտվողների ընդգրկմամբ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական վերլուծությամբ:

**Էմպիրիկական հետազոտություններն իրականացվել են** 2010-2013 թթ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի և Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա):

**Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը** - հետազոտությամբ նախ և առաջ բացահայտվել է պատանեկան ճգնաժամի առաջացման կարևորագույն պատճառներից մեկը՝ ինքնուրույնության հասնելու դժվարությունները, այս պահանջմունքի ֆրուստրացիան: Հիմնավորվել է, որ պատանեկան ճգնաժամի ընթացքի սրությունը մեծապես պայմանավորված է ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության աստիճանով: Ուրվագծվել են ինքնուրույնության զարգացման օնտոգենետիկ առանձնահատկությունները և պատանեկան տարիքում ինքնուրույնության բնութագիրը: Ցույց է տրվել, որ գոյություն ունեն ինքնուրույնության տարբեր ոլորտներ (կենսաբանական, հոգեբանական, սոցիալական, տնտեսական ինքնուրույնություն): Մանրամասն նկարագրվել է պատանեկան ճգնաժամի ախտանշանների համալիրը, տարբեր ախտանշանների դրսևորման հաճախականությունը:

**Հետազոտության կիրառական նշանակությունը** – հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պատանիների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների՝ հոգեթերապիայի, հոգեբանական խորհրդատվության, պատանիների դաստիարակության ոլորտներում: Մեր կողմից մշակված հարցարանները կարող են կիրառվել պատանեկան ճգնաժամի, պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության աստիճանի ախտորոշման մեջ: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «Ինքնուրույնություն», «Պատանեկան տարիք», «Պատանեկան ճգնաժամ» թեմաներով դասընթացների և դասընթացների բաժինների մեջ:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.**

**1.** Ինքնուրույնության պահանջմունքն անձի հիմնարար պահանջմունքներից է, այն ունի իր հակադիր՝ կախյալության պահանջմունքը:

**2.** Յուրաքանչյուր տարիքային փուլում ինքնուրույնությունն ունի իր առանձնահատկությունները, դրսևորման մակարդակները, այսինքն անձի զարգացման հետ ինքնուրույնության ավելի ու ավելի բարձր դրսևորումներ ու մակարդակներ են ի հայտ գալիս:

**3.** Ինքնուրույնության դրսևորման ամենավերջին մակարդակն ինքնավարությունն է, որի պահանջմունքն առաջատար է դառնում պատանեկան տարիքում և միտված է ապահովելու պատանու անցումը հասունության:

**4.** Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան ճգնաժամի առաջացումն ու ընթացքը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է:

**Ատենախոսության փորձաքննությունը** - հետազոտության արդյունքները ներկայացվել և քննարկվել են Խ.Աբովյանի անվ. Պետական մանկավարժական համալսարանի Հոգեբանության տեսության և պատմության, Գյումրիի Մ. Նալ-

բանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի և Գյումրիի «Պրոգրես» համալսարանի հոգեբանության ամբիոնների նիստերում, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված կոնֆերանսում:

**Ատենախոսության կառուցվածքը** - Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (132 անուն) և հավելվածից: Աշխատանքում ներկայացված են ինը հիստոգրամ, մեկ աղյուսակ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի հրատապությունը, ներկայացվում են հիմնախնդրի էությունը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածը, մեթոդոլոգիական հիմքերը և մեթոդները, տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, փորձաքննությունը և պրակտիկ ներդրման ոլորտները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ « Ինքնուրույնության որպես հոգեբանական երևույթի հետազոտությունները» (բաղկացած է երեք պարագրաֆից) նվիրված է հասկացությունների ճշգրտմանը, ներկայացվում են՝ «Ինքուրույնություն, ինքնորոշում, անկախություն» հասկացությունների տարբեր մեկնաբանությունները: Ատենախոսության երկրորդ պարագրաֆում («Ինքնուրույնության և դրա տարիքային զարգացման հետազոտությունները») ներկայացվում են ինքնուրույնության և դրա տարիքային զարգացմանը նվիրված հետազոտությունները: Տարբեր հեղինակներ ինքնուրույնությունը բնութագրում են որպես անձի ինքնահաստատման պահանջմունքի բավարարման միջոց (Ն. Կալուգինա), բնավորության գիծ (Ե. Գ. Բարանով), անձի ներքին անկախության վիճակ (Ի. Կոն, Ա. Աբուլխանովա-Սլավսկայա), մարդու հիմնային պահանջմունք (Վ. Կասեր, Ռ. Ռայան) և այլն: Ըստ Ջիմ Թեյլորի, երեխայի զարգացման ընթացքում ինքնուրույնության սահմաններն աստիճանաբար ընդլայնվում են: Է. Էրիքսոնը, Ս. Տեպլյուկը գտնում են, որ ինքնուրույնության ձևավորման համար սենզիտիվ են հատկապես 1-3 տարեկանի շրջանը: Ինքնուրույնության ձևավորման գործում կարևորվում է նաև կրտսեր դպրոցական տարիքը (Օ. Վոլոգոդսկայա, Օ. Օստրովերխ և ուրիշներ): Դեռահասության և պատանեկության շրջանում էական փոփոխություններ են նկատվում ինքնուրույնության դրսևորման հիմքում ընկած դրդապատճառների և դրսևորման բնույթի մեջ: Որոշ հեղինակներ առանձնացնում են հատկապես 16-22 տարիքային շրջանը որպես ինքնուրույնության ձգտման շրջան (Ռ. Գոուլդ և ուիրիշներ): Արևմուտքում տարեցների ինքնուրույնության հետազոտությունները ցույց են տալիս, որ այսպես կոչված «լավ ծերացումը», տարեցների բարեկեցությունը, կյանքի որակը ուղղակիորեն կապված է նրանց ինքնուրույնության մակարդակի հետ (Ջ. Բոնդ և ուիրիշներ): Այս գլխի վերջին պարագրաֆը նվիրված է ինքնուրույնության պահանջմունքի էությանը, ձևավորմանն ու զարգացմանը: Ջ. Ռոթերը և Ե. Հոչրեյխը առանձնացնում են անկախության և կախյալության պահանջմունքները՝ առաջինը

բնութագրելով որպես անկախ, ազատ, ինքնուրույն առանց ուրիշի օգնության որոշումներ կայացնելու, նպատակներին հասնելու ձգտում: Դրան հակառակ՝ կախյալության պահանջմունքը ցանկություն է, որ մարդուն հոգ տանեն, ուղղորդեն, պաշտպանեն: Հենրի Մյուրեյն առանձնացնում է, որն իրենից ներկայացնում է ցանկություն լինելու չկաշկանդված, ուրիշներին դիմադրելու, գործելու անկախ և ազատ, ըստ սեփական հայեցողության: Կարեն Հորնին նույնպես անդրադառնում է ինքնուրույնության (Self-Sufficiency), անկախության պահանջմունքներին, համարելով դրանք նևրոտիկ պահանջմունքներ: Պարագրաֆի վերջում կատարվում է այն եզրակացությունը, որ ինքնուրույնությունը և ինքնուրույնության պահանջմունքը դրսևորվում են տարբեր մակարդակներով, որոնք արտացոլում են նաև ինքնուրույնության որպես պահանջմուքի և որպես անձի գոյության ձևը՝ ծննդյան պահին ֆիզիկական ազատագրումից մինչև ինքնուրույն գոյություն՝ սեփական բանականությամբ, խղճով (Ի. Կանտ), կամքով և ցանկությամբ: Ինքնուրույնության պահանջմունքը մեկ դրսևորվում է որպես ազատագրվելու, ֆիզիկական կաշկանդումից ազատվելու ցանկություն, մեկ՝ որպես ինքնուրույն գործողություններ կատարելու ցանկություն կամ սեփական կամքով ղեկավարվելու ձգտում, իսկ ամենազարգացած մակարդակում որպես սեփական կյանքը տնօրինելու պահանջ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Պատանեկան ճգնաժամը և ինք-նուրույնության հասնելու դժվարություններն այս տարիքում», նվիրված է պատանեկան տարիքի և ճգնաժամի առանձնահատկություններին և հետազոտության վարկածի վերլուծությանն ու տեսական հիմնավորմանը: Այս գլխի առաջին պարագրաֆում ներկայացվում են պատանեկան տարիքի տեսությունները, հիմնական բնութագրերը: Է. Էրիքսոնը մեծ տեղ էր տալիս անձի կյանքում պատանեկության շրջանին՝ գտնելով, որ իդենտիֆիկացիոն վարքի դրսևորման բարձրագույն աստիճանն ընդգրկում է հենց այս շրջանը: Լ. Քոլը և Ի. Հոլը գտնում են, որ պատանեկությունը մի շրջան է, որի ընթացքում լուծվում են մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում էլ պատանին վերածվում է հասուն անձնավորության: Այդ խնդիրներն են. ա) ընդհանուր հուզական հասունությունը, բ) հետերոսեքսուալ հետաքրքրության արթնացումը, գ) ընդհանուր սոցիալական հասունությունը, դ) անկախացումը ծնողներից, դ) ինտելեկտուալ հասունությունը, ե) մասնագիտության ընտրությունը, զ) ազատ ժամանակը տնօրինելու ընդունակության ձևավորումը, է) խղճի և պարտքի վրա հիմնվող գոյության սկզբունքների յուրացումը, ը) ես-ի նույնականության ձևավորումը: Վ. Ի. Սլոբոդչիկովը պատանեկությունը (ըստ հեղինակի այն ընդգրկում է 13-18 տարեկանը), անվանում է «Յուրացման փուլ», որի ընթացքում անձը սկսում է սոցիալական նոր դերերի յուրացման մի նոր շրջան: Լ. Տուրևսկայան պատանեկության կարևորագույն բնութագիրը ինքնակողմնորոշումն է համարում:

Ըստ Ս. Խուդոյանի, պատանեկան տարիքը անցումային, այսինքն միջանկյալ շրջան է, որի ընթացքում անցում է կատարվում դեռահասությունից հասունությանը: Այլ կերպ ասած՝ այն ինքնուրույն, առանձին տարիք չէ, միջանկյալ մի շրջան է, որի ընթացքում պատանին ամփոփվում է նախորդ տարիքային փուլի՝ դեռահասության տարիքային խնդիրների լուծման արդյունքները և նախապատրաստվում հաջորդ

տարիքային փուլին: Այս շրջանի ամենակարևոր բնութագիրը, ըստ հեղինակի, ինքնուրույնության հասնելն է, որի էությունը հեղինակը համարում է սեփական անձին հոգ տանելը, կառավարելը, ինչը հնարավորություն է տալիս հետագայում, ասենք, ամուսնությունից հետո, հոգ տանել նաև ուրիշներին: Այս գլխի երկրորդ պարագրաֆը նվիրված է պատանեկան ճգնաժամի հետազոտություններին: Կ. Յունգը ճգնաժամը կապում է այն բանի հետ, որ պատանին բախվում է իրական կյանքի պահանջներին: Ս. Սենը գտնում է, որ պատանեկան ճգնաժամի պատճառը կյանքում սեփական տեղը գտնելու դժվարությունների հետ է կապված: Դ. Լևինսոնի կողմից պատանեկությունը մեկնաբանվում է որպես անցումային մի շրջան, երբ պատանին փորձում է սեփական ուժերով կառուցել իր աշխարհը: Ահա այդ է պատճառը, որ պատանին անընդհատ կարծես փնտրտուքների մեջ լինի թե՛ իր ընկերական շրջապատի ընտրության, թե՛ մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում:

Վ. Սլաբոդչիկովը և Ի. Իսաևը 17-21 տարիքային շրջանը բնութագրում են որպես «անհատականացման ճգնաժամ»: Հեղինակներն այս հասակում ճգնաժամի առկայությունը պայմանավորում են սեփական անհատականությունն ընդգծելու ձգտմամբ և նոր սոցիալական իրավիճակին հարմարվելու խնդիրներով: Այս գաղափարին անդրադարձել է նաև Ե. Սոլդատովան, հեղինակը մասնավորապես գտնում է պատանեկության ճգնաժամի պատճառը երկու հակադիր միտումների առկայությունն է պատանու մեջ՝ մի կողմից նա ձգտում է ընդգծել իր անհատականությունը, մյուս կողմից ուզում է չտարբերվել միջավայրից: Կ. Ն. Պոլիվանովան 18-20 տարեկանը բնութագրում է որպես ծնողներից անկախացման ձգտման շրջան: Ս. Սմիրնովի պնդմամբ ծնողների հետ հարաբերությունների բնույթը հաճախ կարող է պայմանավորել ճգնաժամի ընթացքը պատանեկության շրջանում: Ըստ Աննա Ֆրոյդի հաճախակի կոնֆլիկտները ծնողների հետ պայմանավորված են այն հանգամանքով, որ պատանու մեջ ծնողի զբաղեցրած տեղն աստիճանաբար սկսում է զբաղեցնել ուրիշը: Գերմանացի գիտնական Գ. Թոմեն գտնում է, որ պատանեկան ճգնաժամը տարբեր սերունդների ներկայացուցիչների մեջ տարբեր հանգամանքներով է պայմանվորված և տարբեր շրջաններում է հայտվում:

Այսպես 1890–1930–ական թվականներին ծնվածների ճգնաժամը 15-16 տարեկանում է ի հայտ եկել և պայմանավորված է եղել սոցիալական պայմաններով, իսկ 1920–1930–ականներին ծնվածների մեջ ճգնաժամը դրսևորվում է նրանց կյանքի երրորդ տասնամյակում և պայմանավորված է նախորդ սերնդի գործած սխալների իմաստավորման հետ:

Բ.Լիվեհուդը գտնում է, որ պատանեկան ճգնաժամի ընթացքում տեղի է ունենում անձնավորության արթնացում, որն իր հետ բերում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ո՞րն է իմ տեղը կյանքում», «ինչպիսի՞ն է այս աշխարհը» և այլն:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում («Ինքնուրույնության պահանջմունքի առանձնահատկությունները պատանեկան տարիքում և դրա ֆրուստրացիան») ներկայացվում են ատենախոսության տեսական հիմքերը և վարկածը: Ըստ մեր պատկերացումների պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքը մտնում է զարգացման նոր, ամենաբարձր մակարդակը և հանդես է գալիս որպես

ինքնավարության ձգտում, պահանջ: Ինքնավարությունը պատանեկան տարիքում որպես հոգեբանական երևույթ ունի մի շարք առանձնահատկություններ. նախ և առաջ այն դրսևորվում է որպես ծնողների խնամքից դուրս գալու, ինքն իրեն հոգ տանելու ձգտում, ցանկություն: Այս ձգտման դրսևորումներից է օրինակ՝ տնտեսական անկախությանն ուղղված պատանիների ձգտումն ու քայլերը. շատերը փորձում են փող վաստակել (ավելի շատ տղաներին է բնորոշ, չնայած վերջին տասնամյակում աղջիկներն էլ բավական ակտիվ են այս հարցում): Պատանիները ձգտում են դուրս գալ ծնողների վերահսկողությունից՝ խիստ վիրավորվում են, եթե ծնողները փորձում են հուշել, թե նրանք ինչ պիտի անեն, ինչ ուտեն, ինչ հագնեն, երբ տուն գան, հատկապես, եթե դա արվում է ընկերների մոտ: Պատանիները միմյանց ձեռք են առնում, եթե խիստ կախված են ծնողներից: Պատանիների և նրանց ծնողների միջև կոնֆլիկտների հիմնական թեմաներից մեկը ծնողների վերահսկմանն ու պատանիներնի ինքնաղեկավարման հիմնախնդրին է վերաբերում: ինքնավարության պահանջմունքի արտահայտություն կարելի է համարել հասուն կյանքում կողմնորոշվելուն, աշխարհայացք ձևավորելուն ուղղված պատանիների ձգտումը: Հենց այս տարիքում են պատանիներն ակտիվորեն փնտրում արժեքներ, ձգտում են կողմնորոշվել հասուն միջանձնային հարաբերությունների սկզբունքների մեջ, մասնագիտությունների համակարգում, ցանկանում են գտնել իրենց տեղը կյանքում, բացահայտել գոյության իմաստը, փորձում են կառուցել ուրվագծում իրենց կյանքի ծրագիրը: Առանց այս հարցերի մեջ կողմնորոշվելու, պատանին չի կարող լինել ինքնուրույն: Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի հիմնախնդիրը ընդհանրապես և հատկապես տարիքային տեսանկյունից, հարաբերականորեն աղոտ է հետազոտված: Ռ. Մ. Ռայանն ուղղակի կապ է տեսնում ինքնուրույնության պահանջմունքի բավարարման և բարեկեցության միջև, նա այս պահանջմունքի ֆրուստրացիայի հետ է կապում հոգեախտաբանական որոշ դրսևորումներ: Ինչպես հայտնի է, նախադպրոցական տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան առաջ է բերում նաև երեք տարեկանի ճգնաժամին բնորոշ ախտանշաններ՝ ասենք, նեգատիվիզմ, եթե փորձում են ինչ որ բան պարտադրել երեխային կամ արժեզրկում ու բունտ, եթե նրա ցանկությունները չեն կատարում: Կրտսեր դպրոցական տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան առավելապես դրսևորվում է բունտերով, մեծերի հետ կոնֆլիկտների ձևով: Առավել բուռն դրսևորում ունի ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան դեռահասության տարիքում: Ինչպես և երեք տարեկանի շրջանում, այս դեպքում էլ կարևոր հակազդումներից է նեգատիվիզմը, բունտը, սակայն բունտն ունենում է ամենատարբեր դրսևորումներ՝ տանից փախուստներ, ծնողների հետ չխոսել, նրանց կոպտել, ագրեսիվ վարքի զանազան դրսևորումներ (ընդհուպ մինչև հայհոյանքներ, ֆիզիկական ագրեսիա): Վերջապես պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան, ըստ մեզ, առաջ է բերում այս տարիքի ճգնաժամի հիմնական ախտանշանները: Ըստ էության, այս ախտանշանների մեծ մասը վկայում են մի կողմից պատանու ինքնուրույնության պահանջմունքի ակտուալացման, ինքնուրույնության հասնելուն ուղղված ակտիվ գործունեության, երբեմն նույնիսկ

պայքարի, ինչպես նաև ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի մասին: Ախտանշանների մի մասը պայմանավորված է պատանու ինքնուրույնության ձգտմամբ պայմանավորված որոնումներով, ինքնուրույն գոյության համար անհրաժեշտ կողմնորոշման հիմքի (Պ. Յա. Գալպերին) ձևավորման դժվարություններով (նոր աշխարհայացքի, արժեքների ձևավորումը, կյանքի իմաստի որոնումները, փիլիսոփայական հարցերի մեջ խորանալը, իդեալների որոնումները և այլն), ինքնուրույնությունը կաշկանդող իրողությունների դեմ պայքարով, ասենք, ծնողների և ընդհանրապես մեծերի կողմից պարտադրվող արժեքների, փիլիսոփայության, վարքի նորմերի դեմ բունտով (ըստ էության հայրեր և զավակներ պայքարը պատանու պայքարն է ինքնուրույնության համար): Մի շարք ճգնաժամային ախտանշաններ պայմանավորված են ուղղակի պատանու ինքնուրույն գոյությանը պատրաստ չլինելով (դրանցից կարելի է նշել տագնապներն ապագայի նկատմամբ, վախն անկախանալուց, մեծերի աշխարհից), ինքնուրույն գոյության օբյեկտիվ դժվարություններով (մասնագիտությունների, ընկերների, զուգընկերների հաճախակի փոփոխությունները, ոչ ադեկվատ վարք դրսևորելու տագնապները և այլն): Ճգնաժամային ախտանշաններից շատերը պայմանավորված են ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով՝ օրինակ, սոցիալ-տնտեսական կախյալությամբ (ծնողների հետ կոնֆլիկտները հաճախ հենց այս հողի վրա են տեղի ունենում), ծնողների կողմից պատանուն կախյալության մեջ պահելու ենթագիտակցական ձգտմամբ, կախյալությունից ազատագրվելու ցանկության ու հնարաքվորությունների նաև տագնապների ներհոգեկան բախմամբ:

Այսպիսով, ամփոփելով շարադրվածը, փորձենք ձևակերպել մեր հետազոտությունների հիմքում ընկած վարկածը. ***պատանեկան ճգնաժամը պայմանավորված է ինքնուրույնության հասնելու, անկախանալու օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններով, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով:***

Ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնավարության:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Պատանեկան ճգնաժամը և ինքնուրույնության հասնելու դժվարություններն այս տարիքում. էմպիրիկական հետազոտություն», ներկայացված են մեր վարկածի ապացուցմանն ուղղված էմպիրիկական հետազոտությունների ծրագիրը, մեթոդական համակարգը, նկարագրությունը, արդյունքների վերլուծությունը, քննարկումը, ինչպես նաև ատենախոսության հիմնական եզրակացություններն ու մեթոդական հանձնարարականները: **Էմպիրիկական հետազոտության նպատակն էր՝** պարզել, թե պայմանավորված են արդյո՞ք պատանեկան ճգնաժամի առաջացումն ու ընթացքը ինքնուրույնության հասնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով:

**Էմպիրիկական հետազոտության խնդիրներն են. ա)** էմպիրիկորեն

հետազոտել ինքնուրույնության առանձնահատկությունները պատանեկան տարիքում, պարզել, թե ինչ դժվարությունների են բախվում պատանիները ինքնուրույնության հասնելու ճանապարհին, ինչ առանձնահատկություններ ունի այս պահանջմունքի ֆրուստրացիան, բ) դասակարգել պատանիներին ըստ ինքնուրույնության պահանջ-մունքի ֆրուստրացվածության մակարդակի, Էմպիրիկական հետազոտության ենթարկել պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները, հիմնական ախտանշանները, գ) Էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության հասնելու դժվարությունների, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների կապը, դ) քանակական և որակական վերլուծության ենթարկել հետազոտության արդյունքները: Էմպիրիկական հետազոտություններն իրականացվել են 2010-2013 թթ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիա-տի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա) հետ: Հետազոտություններն իրականացվել են հետևյալ փուլերով. **առաջին փուլում** հետազոտություններն ուղղված էին պարզելու ինքնուրույնության առանձնահատկությունները պատանեկան տարիքում, այն դժվարությունները, որոնց բախվում են պատանիները ինքնուրույնության հասնելու ճանապարհին, այս պահանջմունքի ֆրուստրացիայի առանձնահատկությունները: Այս փուլում կիրառվել են ինքնուրույնության որոշման և Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստերը, Ս. Խուդոյանի կողմից մշակված ինքնուրույնության հետազոտման հարցարանը (պատանիների և ուսանողների համար մշակված), զրույցի մեթոդը: Հետազոտությանը մասնակցել են 224 պատանի: **Երկրորդ փուլը** նպատակ էր հետապնդում Էմպիրիկական հետազոտության ենթարկել պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները և հիմնական ախտանշանները: Այս փուլում կիրառվել են զրույցի և հարցման մեթոդներ: **Երրորդ փուլը** նպատակ էր հետապնդում Էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության հասնելու դժվարությունների, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների կապը, քանակական և որակական վերլուծության ենթարկել հետազոտության արդյունքները: Այս գլխի երկրորդ պարագրաֆում ներկայացված են պատանեկան տարիքում ինքնուրույնության և դրա հասնելու դժվարությունների էմպիրիկական հետազոտությունների ընթացքը:

Հետազոտություններն իրականացվել են 2010-2011 թթ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների հետ (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա): Այս փուլում կիրառված, վերոհիշյալ երեք մեթոդիկաների կիրառումը նպատակ էր հետապնդում բարձրացնել հետազոտության հավաստիության մակարդակը: Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս մեթոդիկան ուղղակիորեն ցույց է

տալիս նաև անձի ինքնուրույնության ու անկախության մակարդակը:

Հետազոտությունները վկայում են, որ ինտերնալների մոտ բարձր է ինքնուրույնության մակարդակը, իսկ էքստերնալների մոտ՝ ցածր (Դ. Ցիրինգ): Ըստ Ջ. Ռոթթերի ինտերնալությունն ու էքստերնալությունը անձնային տիպեր չեն, գոյություն ունի կոնտինուում, որի մի բևեռում բարձր ինտերնալությունն է, մյուսում՝ էքստերնալությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինտերնալության մակարդակը տարիքի և անձի հասունացման հետ բարձրանում է, իսկ էքստերնալությունը՝ նվազում. օրինակ, դեռահասության տարիքում ինտերնալությունը ցածր է և տարեցտարի մոտ բարձրանում է (Ս. Բիկով): Ըստ Ռոթերի թեստի արդյունքների, հետազոտվողների 38%-ը (86 պատանի՝ 37 տղա 16%, 49 աղջիկ 22%) ինտերնալ էր, 62%-ը (138 պատանի՝ 66 տղա 30%, 72 աղջիկ 32%)՝ էքստերնալ:

**Հիստոգրամ 1. Ինտերնալության և էքստերնալության ցուցանիշները**




Ինտերնալության բարձր մակարդակ ունեին (ինտերնալությունը բնութագրող պնդումներին վերաբերող 18-23 դրական պատասխան ինտերնալների 28%-ը (24 պատանի), միջին մակարդակ 41%-ը (35 պատանի), ցածր մակարդակ 31%-ը (27 պատանի):

**Հիստոգրամ 2. Ինտերնալության մակարդակները**



Էքստերնալների մեջ այդ հատկության բարձր մակարդակ ունեին հետազոտվողների 31%-ը (43 պատանի), միջին մակարդակ՝ 39%-ը (54 պատանի), ցածր՝ 30%-ը (41 պատանի):

**Հիստոգրամ 3. Էքստերնալության մակարդակները**




Այսպիսով, ինչպես տեսնում ենք պատանիների բացարձակ մեծամասնությանը բնորոշ է էքստերնալությունը, ինչը վկայում է այս տարիքում ինքնուրույնության ցածր մակարդակի մասին. ըստ որում, տարբերությունը նշանակալի չէր աղջիկների ու տղաների միջև:

Ստացված տվյալները ճշգրտելու, պատանիների ինքնուրույնության մակարդակը որոշելու նպատակով նույն հետազոտվողների հետ անց է կացվել Ա. Կարելինի կողմից ներկայացված ինքնուրույնության մակարդակի որոշման ևս մեկ թեստ, ինչպես նաև հարցում՝ Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարան հարցարանով: Ինքնուրույնության որոշման թեստը բաղկացած է 11 հարցից (հավելված 2): Ըստ որում, հարցերի բնույթն այնպիսին է, որ վերաբերում է հենց պատանեկան տարիքին: Թեստով նախատեսված է տարբերակել ինքնուրույնության բարձր, միջին և ցածր մակարդակներ: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ 224 պատանիներից ինքնուրույնության բարձր մակարդակ են դրսևորում 64-ը (29%-ը), միջին մակարդակ՝ 76-ը (34%-ը), ցածր մակարդակ՝ 84-ը (37%-ը):

Պատանիների ինքնուրույնության առանձնահատկությունների հետազոտման նպատակով իրականացրել ենք նաև հարցում: Հարցման նպատակն էր պարզել, թե հատկապես որ ոլորտներում են պատանիները զգում իրենց ինքնուրույն և անինքնուրույն: Ըստ մեզ, ինքնուրույնությունը միատարր երևույթ չի՝ մարդը կարող է ինքնուրույն լինել մի ոլորտում, բայց անինքնուրույնություն դրսևորել այլ ոլորտներում:

Մեր կողմից պայմանականորեն առանձնացվել են ինքնուրույնության հետևյալ հիմնական ոլորտները. ա) հոգեբանական, բ) սոցիալական և գ) տնտեսական ինքնուրույնություն: Հոգեբանական ինքնուրույնությունն ըստ մեզ ենթադրում է. ա) որոշումների կայացման ինքնուրույնություն, բ) տեսակետների արտահայտման

ինքնուրույնություն, գ) մտածողության և աշխարհայացքի ինքնուրույնություն: Սոցիալական ինքնուրույնությունը նշանակում է ինքնուրույնություն ու անկախություն այլ մարկանցից, մարդկանց խմբերից:

**Հիստոգրամ 4. Պատանիների ինքնուրույնության մակարդակները**




Տնտեսական ինքնուրույնությունը նախ և առաջ ֆինանսական անկախությունն է, ինչպես նաև ինքնուրույն տնտեսվարությունը (առանձին ապրել, ինքնուրույն տնտեսություն վարելը): Այս ոլորտների ուսումնասիրման համար կիրառել ենք Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանը, որն ուղղված էր հետազոտելու ինչպես ընդհանրապես ինքնուրույնությունը, այնպես էլ ինքնուրույնության առանձին ոլորտները: Միջին հաշվով ընդհանուր ինքնուրույնությանը վերաբերող պնդումների դրական պատասխանները հավասար են 56 (25%), այսինքն, ինքնուրույնությունը բնորոշ է (կամ իրենց ինքնուրույն են համարում) հարցված պատանիների ընդամենը 25-%-ը: Հոգեբանական ոլորտի ինքնուրույնությանը վերաբերող պնդումների դրական պատասխանները միջին հաշվով հավասար են 69 (31%), սոցիալական ոլորտինը՝ 67 (30%), տնտեսական ոլորտինը՝ 32 (18%): Ամփոփելով այս հետազոտության արդյուքները կարելի է ասել, որ պատանիների ընդհանուր ինքնուրույնությունը բավական ցածր մակարդակի վրա է, միևնույն ժամանակ պատանիներն իրենց առավել ինքնուրույն են զգում հոգեբանական առումով, մի փոքր ավելի քիչ սոցիալական և ամենաքիչը տնտեսական առումով: Մեր հաջորդ հետազոտությունը նպատակ ուներ հետազոտել պատանիների ինքնուրույնության ֆրուստրացիայի մակարդակը և դրա պատճառները: Հետազոտությունն իրականացվել է նույն ընտրանքի 224 պատանիների հետ, որոնցից 26-ի հետ անց է կացվել զրույց (12 տղա 14 աղջիկ 18-22 տարեկան), իսկ 198-ի հետ հարցում (զրույցն անց էր կացվել հարցումից առաջ, զրույցի հիման վրա մշակվել էր հարցարանը. նույն երևույթը երկու տարբեր մեթոդներով հետազոտությունը նպատակ էր հետապնդում նաև համեմատել արդյունքները): Զրույցը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ պատանիների ինքնուրույնությունը ֆրուստրացված է, նրանք իրենց անկախ ու ինքնուրույն չեն զգում, կախվածություն են զգում հիմնականում ընտանիքից: Զրույցի մասնակիցների մոտ

80%-ը համոզված էր, որ ինքնուրույնությունը, ինքնուրույն կյանքին անցնելն է պատանեկան տարիքի հիմնական խնդիրը, 93% -ն ընդգծում էր, որ ընտանիքը ճնշում է իրենց ինքնուրույնությունը: Նրանց թույլ չեն տալիս իրենց ուզածով ծրագրել իրենց առօրյան ու ապրել: Հրույցի մասնակիցների մոտ 65%-ը գտնում էր, որ իրենց դաստիարակությունը չի նպաստում ինքնուրույնության զարգացմանը: Պատանիները գտնում էին նաև, որ հասարակությունն էլ չի նպաստում պատանիների ինքնուրույնության զարգացմանը: Միևնույն ժամանակ նշում էին, որ իրենք էլ հաճախ հոգեբանորեն պատրաստ չեն ինքնուրույն կյանքին: Հրույցի մասնակիցների բացարձակ մեծամասնությունը (76%-ը) նշում էր, որ մտածել, երազել է ինքնուրույն կյանք սկսել, ասենք մեկնել այլ քաղաք, երկիր: Հետազոտվողների մոտ 70%-ը նշում է, որ դժվարությամբ է կարևոր որոշումներ կայացնում: Հրույցի արդյունքների հիման վրա կարելի է առանձնացնել ինքնուրույնության ֆրուստրացվածության երեք մակարդակ՝ թույլ (պատանիների մոտ 18%-ը), միջին (պատանիների մոտ 48%-ը) և ուժեղ (պատանիների մոտ 34%-ը): Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտվողների ինքնուրույնության սահմանափակությունն ու ֆրուստրացվածությունը կազմում է մոտ 67%, որոնցից ինքնուրույնությունը թույլ է սահմանափակված և ֆրուստրացված հարցվածների 24%-ի մոտ, միջին՝ 62%-ի մեջ և ուժեղ՝ 14%-ի մեջ: Աղջիկների և տղաների ինքնուրույնության սահմանափակվածությունն ու ֆրուստրացվածությունը գրեթե հավասար էր. տղաներինը՝ 61%, աղջիկներինը՝ 63%: Պատանիների բացարձակ մեծամասնությունը (88%) ֆինանսական կախվածություն ունի ծնողներից, ինչն ինքնուրույնությունը ֆրուստրացնող կարևոր հանգամանք է:

Մեր հաջորդ հետազոտության նպատակն էր ճշգրտել պատանեկան ճգնաժամի ախտանշանները և դրանց դրսևորման սրությունը, այսիքն ճգնաժամի ընթացքի սրությունը: Հետազոտությունն իրականացվել է նախ զրույցի մեթոդով: Հրույցին մասնակցել են պատանեկան ինքնուրույնության առանձնահատկությունների հետազոտմանը մասնակցած 28 պատանի (12 աղջիկ, 16 տղա) 18-22 տարեկան: Հրույցն անց է կացվել 2012 թ. Գյումրու «Պրոգրես» համալսարանի ուսանողների հետ: Հրույցի արդյունքները ցույց տվեցին, որ պատանեկան տարիքը բարդ կամ ճգնաժամային են համարում հետազոտվողների 64%-ը (18 պատանի): Տարիքի հիմնական դժվարությունները, խնդիրները, ճգնաժամի ախտանշանները պատանիները համարում են. ա) կյանքում կողմնորոշվելը (68%), բ) ինքնուրույնության հասնելը (63%), գ) իսկական ընկերներ ու սեր գտնելը (56%), դ) որակյալ կրթությունը (45%), ե) աշխատանք գտնելը (42%): Ըստ որում, չկար էական տարբերություն տղաների և աղջիկների միջև: Ճգնաժամի ախտանշաններն ըստ հաճախականության և բնորոշ լինելու հետևյալ կերպ բաշխվեցին. ա) կյանքում ինքնահաստատվելու ձգտումը, բ) անինքնուրույն լինելու զգացողությունը, գ) կոնֆլիկտները ծնողների հետ, դ) անօգնականության և անինքնավստահության զգացողությունը, ե) սեփական կյանքի իմաստի որոնումները, զ) կյանքում կողմնորոշիչների, աշխարհայացքի որոնումները, է) արտաքինի խնդիրը, ը) վախը հասուն, պատասխանատու կյանքից, թ) տխրությունն ու տագնապայնությունը, ժ) օրիգինալության ձգտումը, ի) միայնակության զգացողությունը:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ պատանեկան տարիքը դժվար կամ ճգնաժամային են համարում հարցվածների 59%-ը (զրույցի մասնակիցների 64%-ն էր պատանեկությունը ճգնաժամային համարում), ճգնաժամի հիմնական ախտանշաններն են (ներկայացվում են ըստ ախտանշանները ներկայացնող հարցերին դրական պատասխան տվողների քանակի)՝ ա) ինքնուրույնության հասնելը (62%), բ) կյանքում սեփական տեղը գտնելը (60%), գ) կյանքում կողմնորոշվելը (57%. թերևս այս հարցն իր մեջ ներառում է նաև աշխարհայացքի ձևավորումը, որը նկատելիորեն ավելի քիչ դրական պատասխաններ էր ստացել), դ) ինքնահաստատվելը (55%), ե) կոնֆլիկտները ծնողների հետ (55%), զ) տխրությունը (52%), է) կյանքի անիմաստության զգացողությունը (51%), ը) վախ հասուն, պատասխանատու կյանքից (49%), թ) միայնակության զգացումը (48%), ժ) անինքնավստահությունը (45%), ի) անօգնականության զգացումը (42%), լ) կենտրոնացածությունն արտաքինի վրա (38%), խ) տագնապայնությունը (35%), ծ) օրիգինալության ձգտումը (28%), կ) շրջապատում ոչ ադեկվատ վարք դրսևորելու վախը (24%), հ) տխրությունը (16%) …

Ճգնաժամի սուր ընթացք էին արձանագրել հետազոտվողների 18%-ը, ճգնաժամի ընթացքի միջին սրություն արձանագրեցին 63%-ը և մեղմ էր ընթացքը 19%-ի մեջ:

Ատենախոսության 3.4. ենթագլխում ներկայացված հետազոտության նպատակն էր պարզել, թե արդյո՞ք ազդում է պատանիների ինքնուրույնության կաշկանդումը, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան ճգնաժամի ընթացքի վրա: Այդ նպատակով մենք նոր հարցարան էինք կազմել, որի մեջ միավորել էինք պատանիների ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի հետազոտման և պատանեկան ճգնաժամի հետազոտման հարցարանները՝ որոշ խմբագրումներով և փոփոխություններով: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հստակ կորելյացիա գոյություն ունի ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի սրության միջև. որքան ավելի շատ էին «այո» պատասխանները ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիային վերաբերող հարցերում, այնքան ավելի շատ էին նաև «այո» պատասխանները ճգնաժամի ախտանշաններին վերաբերող հարցերում և հակառակը: Քանակային առումով հետևյալ պատկերն էր. 201 ուսանողից ինքնուրույնության ֆրուստրացվածությունը բարձր էր 19 % (38 պատանի) -ի մեջ (15 և բարձր միավորներ): Այս ուսանողներից 16 % -ի (32 ուսանող) մեջ ճգնաժամի սրությունն էլ բարձր էր: Ֆրուստրացվածության միջին մակարդակ ունեին պատանիների 64%-ը (5-14 միավոր): Ֆրուստրացվածության ցածր մակարդակ ունեին պատանիների 17%-ը (35 պատանի) (0-4 միավոր), որոնցից 16%-ի (33) մեջ մեղմ էր նաև ճգնաժամի ընթացքը: Ստորև ներկայացնում ենք հետազոտության արդյունքների հիստոգրամը:

**Հիստոգրամ 5. Պատանեկան ճգնաժամի սրության և ինքնուրույնության ֆրուստրացվածության կապը**




Հետազոտության արդյունքները մենք վերլուծել ենք Պիրսոնի կորրելյացիոն վերլուծության մեթոդով, որի արդյունքում ստացել ենք 0.893689 գործակիցը: Հարցման արդյունքների համար նման գործակիցը նշանակում է, որ գոյություն ունի հստակ արտահայտված ուղիղ համեմատական կապ պատանեկան տարիքում ինքնուրույնության ֆրուստրացվածության և պատանեկության ճգնաժամի սրության միջև: Հարցման արդյունքները ճշգրտելու, ինչպես նաև պատանիների ինքնուրույնության ֆրուստրացավածության և պատանեկան ճգնաժամի սրության միջև կապի բովանդակային կողմը հետազոտելու նպատակով իրականացվել է նաև զրույց: Զրույցին մասնակցել են 18-22 տարեկան 27 պատանի (17 աղջիկ, 10 տղա), Գյումրու «Պրոգրես» համալսարանից: Զրույցի արդյունքները հաստատեցին հարցման արդյունքները. իսկապես, ինքնուրույնության ֆրուստրացվածության բարձր մակարդակին համապատասխանում է ավելի սուր ճգնաժամը: Հետազոտությանը մասնակցած 27 պատանիներին ըստ ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրաց-վածության աստիճանի և պատանեկան ճգնաժամի սրության բաժանել ենք երեք խմբի՝ բարձր մակարդակ՝ 7 պատանի, որոնցից պատանեկան ճգնաժամը սուր կարող էր գնահատվել 5-ի մեջ (71%), ցածր մակարդակ՝ 8 պատանի, որոնցից 7-ի մեջ (87%) ճգնաժամը մեղմ էր ընթանում, միջին մակարդակ՝ 12 պատանի, որոնցից 9-ի մեջ (75%) կարելի էր արձանագրել պատանեկան ճգնաժամի միջին ընթացք:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և էմպիրիկ հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ **եզրակացություններին.**

1. Ինքնուրույնությունն անձի զարգացումն ապահովող կարևորագույն պահանջմունքներից է, որ սկսում է ի հայտ գալ վաղ մանկությունից: Գոյություն ունի ինքնուրույնության պահանջմունքի հակադիր՝ կախյալության պահանջմունքը:

2. Գոյություն ունեն ինքնուրույնության մակարդակներ, որոնք տարիքային առանձնահատկություններ ունեն, այսինքն անձի զարգացման հետ ինքնուրույնության ավելի ու ավելի բարձր դրսևորումներ ու մակարդակներ են ի հայտ գալիս և ինքնուրույնության պահանջմունքն էլ համապատասխանաբար փոխվում է:

3. Ինքնավարությունը կարելի է դիտել որպես ինքնուրույնության ամենաբարձր և ամբողջական մակարդակ, որին միտված է զարգացման գործընթացը ողջ մանկության շրջանում և որից սկսում է հասունությունը: Ինքնուրույնության պահանջմունքն ինքնավարության ձևով սկսում է ի հայտ գալ 16-17 տարեկանից, իր գագաթնակետին է հասնում 20 տարեկանի շրջանում՝ ապահովելով պատանու անցումը հասունության:

4. Պատանեկան տարիքը ինքնուրույն, առանձին տարիք չէ, այն անցումային, այսինքն միջանկյալ շրջան է, որի ընթացքում անցում է կատարվում դեռահասությունից հասունությանը:

5. Պատանեկան ճգնաժամը ժամանակակից հոգեբանության մեջ ամենաթույլ հետազոտված ճգնաժամերից է, նույնիսկ այս ճգնաժամի ախտանշանները հստակ ուրվագծված չեն: Մասնավորապես հետազոտված չէ ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի դերը այս ճգնաժամի առաջացման գործում:

6. Պատանեկան ճգնաժամը մեծապես պայմանավորված է այս տարիքում ինքնուրույնության հասնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններով, ինչի հետևանքով ֆրուստրացիայէ ենթարկվումի ինքնուրույնության պահանջմունքը:

7. Պատանեկան ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնավարության:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ աշխատություններում**

1. Խաչատրյան Զ. Ռ. Պատանեկության՝ որպես տարիքային փուլի հիմնախնդիրը, Հոգեբանությունը և կյանքը, № 3-4, 2011, էջ 5-8:

2. Խուդոյան Ս.Ս, Խաչատրյան Զ. Ռ. Ինքնուրույնության պահանջմունքի առանձնահատկությունները պատանեկան տարիքում, ֆրուստրացիան և պատանեկան ճգնաժամը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները, № 3, 2012, էջ 98-100:

3. Խաչատրյան Զ. Ռ. Ինքնուրույնության հիմնախնդիրը հոգեբանության մեջ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր. «Մանկավարժ», 2013, էջ 261-264:

4. Խուդոյան Ս.Ս. Խաչատրյան Զ. Ռ. Տարիքային ճգնաժամերի գործոնի հաշվառումը ավագ դպրոցում հոգեբանական խորհրդատվություն իրականացնելիս, «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր. Եր. Գր. Տաթևացի, 2014, էջ 222-228:

5. Խաչատրյան Զ. Ռ. Պատանեկան ճգնաժամի հիմնախնդիրը, Հոգեբանության արդի հիմնախնդիրները (գիտական աշխատությունների ժողովածու), Եր.: Գրիգոր Տաթևացի, 2016, էջ 5-12:

6. Խաչատրյան Զ. Ռ. «Ինքուրույնություն», «ինքնորոշում» և «անկախություն» հասկացությունները հոգեբանության մեջ, Հոգեբանության արդի հիմնախնդիրները (գիտական աշխատությունների ժողովածու), Եր.: Գրիգոր Տաթևացի, 2016, էջ 18-23:

ХАЧАТРЯН ЗОРАК РАФИКОВИЧ

# САМОСТОЯТЕЛЬНОСТЬ ЛИЧНОСТИ И КРИЗИС РАЗВИТИЯ В ЮНОШЕСКОМ ВОЗРАСТЕ

***Автореферат диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – " Общая психология, теория и история психологии, психология личности".***

***Защита диссертации состоится 04 апреля 2016 года в 12:00 на заседании специализированного совета по психологии и философии 064 ВАК РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.***

## РЕЗЮМЕ

**Актуальность исследования**. Самостоятельность является одним из важнейших характеристик личности обуславливающих качество ее жизни и эффективное функционированное в обществе. Самостоятельность является также фундаментальной потребностью личности, фрустрация которой серьезно влияет на психическое здоровье, социальную адаптацию и развитие личности. Особое значение имеет самостоятельность в юношеском возрасте. В психиатрии этот возраст характеризуется учащением психических заболеваний и суицидальных попыток. Все вышеуказанное делает тему исследования актуальной не только с научной, но и практической точки зрения. С другой стороны проблема самостоятельности, а также юношеский возраст и кризис недостаточно изучены как в теоретическом, так и практическом плане. Мало изучены такие проблемы как онтогенетическое развитие самостоятельности, сущность потребности в самостоятельности, причины, механизмы, течение и исход юношеского кризиса. До сих пор не разработана стратегия и тактика педагогических и психологических работ в период юношеского кризиса.

**Цель исследования** - выявить закономерности развития, обусловливающие кризис юношеского возраста, в частности изучить роль стремления к самостоятельности в формировании этого кризиса.

**Гипотеза исследования** - в процессе формирования юношеского кризиса важную роль играют объективные и субъективные трудности достижения самостоятельности и независимости, а также фрустрация потребности в самостоятельности.

**Научная новизна и теоретическая значимость исследования.** В исследовании выявлена одна из важнейших факторов, обусловливающих кризис юношеского возраста – трудности достижения самостоятельности и фрустрация этой потребности. Выявлена, что острота течения юношеского кризиса во многом обусловлена уровнем фрустрации потребности в самостоятельности. Выявлены особенности онтогенетического развития самостоятельности и ее характеристики в юношеском возрасте. Описаны разные сферы самостоятельности (биологическая, психологическая, социальная, экономическая). Описан комплекс симптомов юношеского кризиса и частота проявления разных симптомов.

**Практическая значимость исследования**

- **Результаты исследования** могут применяться при осуществлении психологической консультации и психотерапии юношей.
- **Результаты исследования** могут применяться при осуществлении воспитательных работ с юношами.
- **Разработанные опросники** могут применяться при психодиагностике кризиса юношеского возраста и уровня фрустрированности потребности в самостоятельности в этом возрасте.
- Результаты исследования могут быть применены при разработке таких лекционных курсов, как «Самостоятельность», «Юношеский возраст», «Юношеский кризис».

**Достоверность результатов.** Достоверность результатов обеспечена методологической обоснованностью исследования, разнообразностью эмпирических методов, качественным и количественным анализом полученных результатов.

**Структура и объем диссертации –** Работа состоит из введения, трех глав, заключения, библиографического списка (132 источников) и 3 приложений. В диссертации имеется 9 гистограмм и 1 таблица.

**По теме диссертации опубликованы 6 научных статей.**

ZORAK RAFIK KHACHATRYAN

# INDEPENDENCE OF PERSONALITY AND THE DEVELOPMENTAL CRISIS OF EARLY ADULTHOOD

***Thesis submitted for the Degree of Candidate of Psychological sciences.***

***Specialty Field: 19.00.01"General Psychology, Theory and History of psychology". The official defense of the thesis will take place at Higher Attestation Commission's psychology and philosophy 064 Degree-awarding Scientific Council's session to be held on April 4, 2016 at 12.00.***

***Armenian State Pedagogical University after Khachatur Abovian (Address: Tigran Mets, 17, Yerevan, 0010)***

## SUMMARY

**Actuality.** Independence is one of the person's important characteristics, which determines the quality of the life and effective functioning in society. Independence is also a fundamental need of the person. Frustration of this need can have a serious impact on mental health, social adaptation and personal development. Independence is particularly important to a early adulthood. In psychiatry early adulthood is characterized by the increased frequency of mental illness and suicide attempts. The above-mentioned facts make the topic relevant not only scientifically, but also from a practical perspective. On the other hand, the problems of self-sufficiency, as well as the period of early adulthood and the crisis of this age are not studied enough and theoreticaly and from practical aspect. In particular, such issues as the development of independence in ontogeny, the essence of the need for independence, the causes, mechanisms, course and outcome of the crisis of early adulthood have been studied very little. It should also be noted, that still are not developed the strategy and tactics of pedagogical and psychological works during the period of early adulthood crisis.

**The purpose** of the research is to identify the patterns of development, which determine the early adulthood crisis, in particular, to examine the role of actualized need for independence and its frustration in shaping this crisis.

**Research hypothesis.** In the formation of the early adulthood crisis an important role are playing the objective and subjective difficulties in achieving autonomy and independence, as well as the frustration of the need for independence.

**Scientific novelty and theoretical significance of the research**. This research has found one of the major factors contributing to the crisis of early adulthood-difficulties in achieving independence and frustration of the need for independence. The study revealed that the severity of early adult's crisis is largely due to the level of frustration of the need for independence. The peculiarities of ontogenetic development of autonomy and its characteristics in early adulthood are described in the thesis. Different spheres of autonomy (biological, psychological, social, economic) are analized in the thesis. The research found the complex of the early adulthood crisis symptoms and the frequency of manifestations of different symptoms.

**The practical significance of research. 1.** The results of this research can be applied in the spheres of psychotherapy and psychological counseling of early adults. 2. Results of the study can be used in pedagogical works with early adults. 3. Developed questionnaires can be used in psychodiagnostics of early adulthood crisis and the level of frustration of the need of independence in this age. 4. The research results can be applied in the courses of such themes as "Independence", "Early adulthood", "Early adulthood crisis".

**Credibility of Results** is conditioned by valid methodological basis of the research, diversity of research methods, qualitative and quantitative analysis of empirical data.

**The conclusions** are reflecting the main outputs of the research.

**The structure and volume of the dissertation** - Dissertation consist of the introduction, three chapters, the conclusion, the bibliographic list (132 sources) and 3 appendices. There are nine histograms and one table In the dissertation.

On the theme of the dissertation are published six scientific articles.